



ՀԱՐՑԱԶՐՈՒՅՅ ԵՐԵՎԱՆԻ ՌԱԴԻՈՑԻ ԹՂԹԱԿՅԻ ՀԵՏ

Օգոստոսի 30-ին՝ շորեցաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին Վեհափառ Հայրապետ վեհարանում բարեհանում է բնորմել Երևանի ռադիոյի թղթակցին և պատասխանել մի շաբթ հարցերի՝ Ժնև Իր կատարած ուղևորության մասին.

ՀԱՐՑ.—Վեհափառ, բոլոր տվեր, ոլքությով Ձեր վերադարձը արտասահմանան ուղևորությունից, մի քանի հարցով դիմել Ձեզ:

— Խնդրեամ, որպատճյամք:

— Կարծում եմ, մեր ունկնդիրների համար հետաքրքիր կիմներ խնամալ Ձեր՝ Ամենայն Հայոց Հայրապետի Ըվելցարիա կատարած ուղևորության նպատակը և այդ ուղևորության արդյունքը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Պաշտոնական հրավերով, Մենք այցելություն տվինք Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի կեղրոնից ի Ժնև, Մայր Սրբու և, Էջմիածնեւ՛ անձամբ տաճելով Մեր ոչչոյնը և օրինությունը՝ իբրև գերազանց պետք հայ Եկեղեցվոր, որ ինչպես հայտնի է, անդամ է միջեկեղեցական այդ մեծ միության: Մենք մոտեն ծանոթացանք Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի կազմակերպության կառուցին և անոր բազմակրթանի աշխատանքներուն և առավել ամրապնդեցինք մեր Եկեղեցվոր Եղրայրական կապերը: Վերադարձանք սրանչելի տպավորությամբ և մեր Եկեղեցվոր գործակցությունը առավել ընդլայնելու ոգագացնելու անհրաժեշտությամբ:

ՀԱՐՑ.—Ձերդ Արքություն, եթե կարելի է, սեղմ բնորագրեք Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գործունեությունը: Ցանկալի էր իմանալ նիշյալ խորհրդի գերագույն նպատակը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի հիմնական նպատակն է՝ ստեղծել Եղրայրական համախմբումը բոլոր բրիստունյա եկեղեցիներու՝ փոխադարձ սիրո և նարզանի մթնոլորտի մեջ, միասնաբար և գործակցաբար իրականացնելու համար Ալետարանի պատգամները ներկա աշխարհի մեջ: Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը կենդանի շարժում մըն է, որ կձգուի իր խորը ըստ և իր աշխատանքի բաժինը բերել կրոնական, դաստիարակչական, մշակութային և ընկերային:

մարգերու մեջ: Մենք կիսավատանք, թե աշխարհի խաղաղության պահպանման հրամակական և ազգերու և պետություններու համերաշխ գործակցության իդեալը, առաջնամերթ նպատակները պետք է նկատել Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի, որ ցարդ գնահատելի ջանքեր ի գործ դրած է արդեն այս ուղղությամբ:

ՀԱՐՑ.—Վեհափառ, մեզ հայտնի է, որ Ծվեյցարիայում ևս նայ համայնք կա, և Դուք, Ձեր ուղևորության ընթացքում, հանդիպումներ եք ունեցել տեղի հայերի հետ:

Խնդրում եմ, մի քանի խոսք Ծվեյցարիայի հայ գալութի կյանքի մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Զվիցերիու մեջ կապրին շուրջ հինգ հարյուր հայեր, մեկ մասը Մեծ եղենին որքերեն, որոնք Առաջին համաշխարհային պատերազմնեն հետո քեզված են Զվիցերիա, բարեփրական զվիցերական կազմակերպություններու կողմէն: Հայերու մեծ մասը այժմ կապրի ժնն քաղաքին մեջ, որ այս օրերուն կկառուցվի հայոց առաջին եկեղեցին, և որուն օծումը պիտի կատարվի հառաչիկա տարի: Եկեղեցվու կից կկառուցվի նաև սրան մը՝ հայ արվեստի բաննարանի համար, ինչպես և դահլիճ մը, որ պետք է ծառայել իբրև հավաքավայր մշակութային ձեռնարկներու համար: Այսպիսով, սկիզբ կառնե Ժննի հայ համայնքի կրոնա-մշակութային և ազգային կազմակերպյալ կյանքը, և Էջմիածնի աստվածային օրինության հերքը:

ՀԱՐՑ.—Արտասահմանան մամուլում և ուղիղում տեղ գտած լուրերի համաձայն, Ժննում Ձեզ այցելել են մի շարք երկրների հոգևոր առաջնորդներ և ազգային գործիչներ: Ձերդ Սրբություն, թերևս մեր ավալուրանայ ոմնկանիդների համար անհետաքրքիր չեր լինի իմանալ, թե ընդհանուր առմամբ ինչ հարցեր են հոգել Ձեր Ժննայան այցելուներին:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Մեր ներկայությունը Ժնն բացառիկ ոգևորություն ստեղծեց ոչ միայն Զվիցերիու հայության ծոցին մեջ, որոնք բոլորը անխորհի համախմբված էին Հայոց Հարաբաւտին շուրջ, այլ նաև դրացի ու հեռավոր երկիրներէ Ֆրանսիայեն, Իտալիայեն, Միացյալ Նահանգներեն, և Պոլսեն, Հունաստանեն և Լիբանանեն շուրջ 400 և ավելի հայ ազգային ծանոթներ, մտավորականներ և հավատացյալներ փոխացեր էին գալ Լեմանի ափերը՝ մասնակցելու տեղվոլու հայ համայնքին կազմակերպած հանդիսություններուն և մանավանդ հայրապետական և պատարագին, որ մատուցեցավ հունիս 16-ին բողոքականաց ս. Պետրոս պատմական Մայր տաճարին մեջ: Մենք խորապես միմիշարվեցանք ի տես այս եկեղեցական-ազգային միասնության սքանչելի արտահանության ու անգամ մը ևս համոզվեցանք, թե ս. Էջմիածնին իրապես հրաշագործ է և ամփոխարինելի ազգային սրբավայր համայնք հայ ծողովուրդի համար, իբրև ազգային-հոգևոր գերագույն միակ կեդրոնը ամբողջ հայության:

Ժնն եկան Մեզ ողջունելու 21 սրբազն եպիսկոպոսներ և վարդապետներ ու 4 քահանաներ՝ գլխավորությամբ Կ. Պոլս ամենապատիկ Ընորիք սրբազն պատրիարքի, ինչ որ Մեզ մեծապես ուրախացուց:

Ժնն Մեր գտնվելու օրերուն ունեցանք երկու եպիսկոպոսական խորհրդակցություններ, մեր եկեղեցին հոգող մի քանի հարցերու մասին:

ՀԱՐՑ.—Մամուլում զանազան լուրեր են տպագրվել նաև Երուսաղեմի սրբավարերի (սուրբ տեղաց) իրավական վիճակի մասին: Խնդրում եմ Ձեր կարծիքը այս հարցի առնչությամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Երուսաղեմի մեջ ստեղծված այժման կացության առնչությամբ Մեր օրինական ցանկությունն է, որ սուրբ տեղաց մեջ նաև հետայր լիազեն հարգվին և սրբությամբ պահպանվին դարերով հաստափած եկեղեցական իրավասությունները: Ինչպես հայտնի է, սուրբ տեղաց մեջ Հայաստանյաց առաքելական եկեղեցին ներկայացնող Երուսա-

դեմի հայոց պատրիարքությունը իր օրինական դարավոր իրավունքներով ու Բնոլինակությամբ կհանդիսանա հավասար իշխանություն և իրավունքներ վայելող եկեղեցիներն մինչ բատինաց և հունաց օրթոդոքս եկեղեցիներու կողքին: Մենք վատահ ենք, թե այս իրավական գոյավիճակը անյախտ կերպով կպահպանվի համ նետագային:

ՀԱՐՑ.—Վեհափառ, չէ՞ք կամենա որևէ որիշ բան ավելացնել Չեր առածներին:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Մենք երջանիկ եղանք պաշտոնական ալցելություն տապու Ժնիվ կանոնից նախագահ, Նորին Գերազանցություն Անդրե Շավանին, որ Մեզ ընդունեց բացառիկ ջերմությամբ և խոր համակրանքով դեպի հայ եկեղեցին, դեպի հայ ժողովուրդը և մշակույթը:

ՄԵՆՔ՝ իբրև Հայոց Հայրապետ, երախտապարտ սրտով կմնանք աղոթող Զվիցերիո սրբանչելի երլրին և նույնքան սրբանչելի Ժնև քաղաքի բարության և խաղաղության համար:

— Խնդրեմ, ամենայն սիրով:

